

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/2

2 օգոստոսի 2016թ.

Քննարկվեց Սամվել Գաբրիելյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 18.05.2016թ. թ-2/376 գրության դեմ:

Սամվել Գաբրիելյանի գանգատում բերված փաստարկները.

Սամվել Գաբրիելյանը հայտնում է, որ 19.06.2016թ. դիմել է խնդրելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համաձայն վերացնել ժամկետանց ապօրինի ՀՀ ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչության կայացրած 20.07.2015թ. թիվ 143 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններից մնացած 38.275 դրամը, որի վերաբերյալ 23.06.2016թ. ստացվել է 20.06.16թ. թիվ 06/11-1/18584-16 պատասխան գրությունը:

Գանգատաբերը պատասխանի հետ համաձայն չէ, քանի որ բողոքարկելու երկամսյա ժամկետը բաց չի թողնվել: Մասնավորապես, նա բողոքարկել է Կապանի ՏՀՏ-ի կողմից իր ներկայացրած բողոքի պատասխանը՝ գրված 18.05.2016թ., որը ստացել է 25.05.2016թ.: Հետևապես պահպանվել է բողոք բերելու երկամսյա ժամկետը: Կապանի ՏՀՏ-ի պատասխանի և փոստային նամականու ծրարի պատճենները դիմումի հետ կրկին ուղարկվում են, ավելացնելով 20.06.2016թ. թիվ 06/11-1/18584-16 պատասխանի և փոստային նամականու ծրարների պատճենները:

Այս անգամ էլ դիմումին օրինական լուծում չտրվելու դեպքում գանգատաբերը ստիպված կլինի բողոքարկել հատուկ քննչական վարչություն, դատախազություն, ՀՀ նախագահի աշխատակազմի վերահսկողության ծառայություն, ԶԼՄ-ներ և այլն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Սամվել Գաբրիելյանի կողմից 03.03.2016թ. դիմում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ, որին պատասխանվել է Կապանի ՏՀՏ 18.05.2016թ. թ-2/376 գրությամբ (այսուհետ՝ Գրություն): Գրությունում մասնավորապես նշվել է.

1. ՀԴՄ-ի գծով առաջադրված տուգանքի մասով կատարվել է պարտավորությունների վերահաշվարկ, որի արդյունքում տուգանքը գրոյացվել է:

2. Եկամտահարկի պարտավորությունն առաջացել է 09.03.2011թ. և 14.04.2012թ. ներկայացված տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկներում արտացոլված տվյալների հիման վրա և կազմում է 11.405 դրամ:

3. 25.03.2005թ. ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրված թիվ ՊԼ-3776 «Այլ սննդամթերքի արտադրության» գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի վճարման վերջնաժամկետը համարվում է յուրաքանչյուր տարվա մարտի 25-ը: 2006թ-ի պետական տուրքը վճարվել է 2006թ.

սեպտեմբերի 8-ին: Հետևապես 2006թ. մարտի 25-ից մինչև սեպտեմբերի 8-ը հաշվարկվել է 20.875 դրամի տույժ, որն առ այսօր վճարված չէ: Ինչ վերաբերվում է 22.03.2005թ. վճարված 25.000 դրամին, ապա այդ վճարումը կատարվել է նախօրոք՝ լիցենզիա ստանալու կարգին համապատասխան: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 26.03.2007թ. թիվ 315-Ն հրամանի համաձայն լիցենզիայի ուժը ճանաչվել է կորցրած:

4. 22.08.2006թ. թիվ 1303540 ստուգման ակտի 10%-ի գծով չկատարված պարտավորությունը կազմում է 6.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ 18.05.2016թ. դրությամբ Սամվել Գաբրիելյանի պարտավորությունները կազմում են ընդամենը 38.275 դրամ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալները, արձանագրեց, որ Սամվել Գաբրիելյանի 18.05.2016թ. դրությամբ պարտավորությունները կազմել են ընդամենը 38.275 դրամ: Այսինքն, նշված պարտավորություններն հաշվարկվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, հիմնավոր են և ենթակա են կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

Սամվել Գաբրիելյանի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ